«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Պ-613-13.05.2020-ՏՀ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ (այսուհետ՝ նախագիծ) ներկայացնում ենք ՀՀ կառավարության առաջարկությունները, մասնավորապես՝

- միջմարզային, ներմարզային, ներքաղաքային երթուղու շահագործման համար պետական տուրքի հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում տվյալ ամսվա ընթացքում տվյալ երթուղու սպասարկման նպատակով շահագործվող ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը՝ բացառությամբ պահուստային տրանսպորտային միջոցների,

- պետական տուրքի հաշվարկման նպատակով՝ ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը չի կարող պակաս լինել տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակից՝ բացառությամբ պահուստային տրանսպորտային միջոցների:

Անդրադառնալով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին կարգավորմանը՝ հարկ ենք համարում նշել, որ օրենքի 19.7-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված է, որ միջմարզային, ներմարզային, ներքաղաքային երթուղու շահագործման համար պետական տուրքի հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում տվյալ ամսվա ընթացքում տվյալ երթուղու սպասարկման նպատակով շահագործվող ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը: Նշված դրույթը կանոնակարգում է երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցների փաստացի քանակի համար (անհրաժեշտության դեպքում՝ նաև պահուստային տրանսպորտային միջոցների) պետական տուրքի վճարման գործընթացը: Նույն մասի երկրորդ նախադասությունը սահմանում է, որ պետական տուրքի հաշվարկման նպատակով ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը չի կարող պակաս լինել տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ ավտոբուսների կամ միկրոավտոբուսների (ներառյալ՝ պահուստային տրանսպորտային միջոցների) քանակից, ինչը խնդրահարույց է այն առումով, որ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների քանակը

հաշվարկվում է առանց պահուստային տրանսպորտային միջոցների, որոնք նախատեսվում են շահագործել հիմնական տրանսպորտային միջոցների շահագործման անհնարինության դեպքում դրանց փոխարինելու համար, իսկ պետական տուրքը վճարվում է նաև պահուստային տրանսպորտային միջոցների համար:

Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ՀՀ հարկային օրենսգրքի 276-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրումը համարվում էր արտոնագրային հարկի հարկման օբյեկտ: Այդ գործունեության մասով արտոնագրային հարկի հաշվարկման հետ կապված՝ ՀՀ հարկային օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված էր, որ արտոնագրային հարկի հաշվարկման համար հիմք է ընդունվում ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրում իրականացնելու համար, համապատասխանաբար, ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը: Ընդ որում՝ եթե միկրոավտոբուսների կամ ավտոբուսների քանակը, որոնց վերաբերյալ սահմանված կարգով նախապես ներկայացվել էր արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն, պակաս էր կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների կամ ավտոբուսների (առանց պահուստային տրանսպորտային միջոցի) քանակից, ապա տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ելակետային տվյալը որոշվում էր տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների կամ ավտոբուսների (ներառյալ՝ պահուստային տրանսպորտային միջոցների) քանակով:

2020 թվականի հունվարի 1-ից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.7-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ միջմարզային, ներմարզային, ներքաղաքային երթուղու շահագործման համար պետական տուրքի հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում տվյալ ամսվա ընթացքում տվյալ երթուղու սպասարկման նպատակով շահագործվող ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը: Ընդ որում՝ պետական տուրքի հաշվարկման նպատակով ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը չի կարող պակաս լինել տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ ավտոբուսների կամ միկրոավտոբուսների (ներառյալ՝ պահուստային տրանսպորտային միջոցների) քանակից:

Հաշվի առնելով, որ 2020 թվականի հունվարի 1-ից կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեությունն արտոնագրային հարկի համակարգից պետական տուրքի համակարգ տեղափոխելը պարզապես պայմանավորված է եղել

արտոնագրային հարկի համակարգի վերացմամբ և հարկային բեռի վերանայման նպատակ չի հետապնդել, ուստի 2020 թվականի հունվարի 1-ից հետո պետական տուրքի մասով գործող կարգավորումները վերանայման կարիք ունեն: Կանոնավոր երթուղի-ներում նախատեսվող պահուստային տրանսպորտային միջոցները երթուղիներում շահագործվում են միայն հիմնական տրանսպորտային միջոցների շահագործման ան-հնարինության դեպքում՝ դրանց փոխարինման նպատակով, ուստի երթուղիների սպա-սարկման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների քանակից բացի, չշահա-գործվող և շահույթ չապահովող պահուստային տրանսպորտային միջոցների համար արտոնագիր տրամադրելու պետական տուրքի գանձումը լրացուցիչ ֆինանսական բեռ է փոխադրողների համար:

Նախագծով նախատեսվում է պետական տուրքի գծով արտոնություն տրամադրել կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին այն առումով, որ նրանք ազատվում են միջմարզային, ներմարզային, ներքաղաքային երթուղու շահագործման կամ ավտոբուս-ներով (միկրոավտոբուսներով) ուղևորափոխադրումների կազմակերպման արտոնագիր տրամադրելու համար վճարվող պետական տուրքի վճարումից չշահագործվող պահուստային տրանսպորտային միջոցների մասով: Երբ շահագործվող տրանսպոր-տային միջոցները լրացնելու կամ փոխարինելու անհրաժեշտություն առաջանա, ապա դրանց համար՝ որպես շահագործվող տրանսպորտային միջոցների, պետական տուրքի վճարման գործընթացը կիրականացվի օրենքի 19.7-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին նախա-դասությամբ սահմանված կարգավորմամբ:

Կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված պահուստային տրանսպոր-տային միջոցների մասով մինչև 2020 թվականի հունվարի 1-ը գործող «Արտոնագրային հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները պետական տուրքի հաշվարկման մասով կիրառելու նպատակով՝ նախագծի վերաբերյալ ունենք հետևյալ առաջարկությունները.

1) օրենքի 19.7-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված դրույթները վերաբերում են հարկ վճարողների կողմից տվյալ երթուղու սպասարկման նպատակով շահագործվող ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակին, որի մասով հարկ վճարողը պարտավոր է ներկայացնել հայտարարություն: Իսկ նույն մասի 2-րդ նախադասությունը վերաբերում է տրանսպորտային միջոցների նվազագույն քանակին՝ այն է տվյալ երթուղու

սպասարկման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների քանակը: Միաժամանակ, նախագծով առաջարկվող փոփոխության պարագայում ստացվում է՝ այն դեպքերում, երբ երթուղին սպասարկելու համար հարկ վճարողը լրացուցիչ շահագործում է պահուստային տրանսպորտային միջոցը, որը չի օգտագործվում երթուղի (երթուղիներ) դուրս չեկած ավտոբուսի փոխարեն, պետական տուրք չի հաշվարկվելու ու չի վճարվելու: Հետևաբար, օրենքի 19.7-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին նախադասությունում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը բացակայում է և օրենքի նախագծի 1-ին հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19.7-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ նախադասությունում «(ներառյալ՝ պահուստային տրանսպորտային միջոցների)» բառերը փոխարինել «(առանց՝ պահուստային տրանսպորտային միջոցների)» բառերով.

2) նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող խմբագրությամբ օրենքի 19.7-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ նախադասությունում կատարվող փոփոխությամբ պահուստային տրանսպորտային միջոցների քանակը չի ներառվում պետական տուրքի հաշվարկման համար երթուղու սպասարկման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների քանակում և այդ մասով պետական տուրք չի հաշվարկվում, հետևաբար նախագծի 2-րդ հոդվածի անհրաժեշտությունը բացակայում է, և առաջարկում ենք հանել նախագծի 2-րդ հոդվածը:

Նախագծում առկա են նաև օրենսդրական տեխնիկայի կանոնների առումով խմբագրման կարիք ունեցող դրույթներ, մասնավորապես՝

1) նախագծի վերևի աջ անկյունում անհրաժեշտ է լրացնել «ՆԱԽԱԳԻԾ» բառը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը.

2) նախագծի 1-ին հոդվածում օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս անհրաժեշտ է պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բոլոր վավերապայմանները, մասնավորապես՝ անհրաժեշտ է նշել օրենքի հերթական համարը, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը:

Ելնելով վերոգրյալից՝ նպատակահարմար ենք համարում ներկայացված օրենսդրական առաջարկի ընդունումը՝ ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակված տարբերակով: